ՄԵՎ-ԿԱՊՈՒՅՏ-ՄՇՈՒՇԱԳՈՒՅՆ ԼԵՌՆԵՐ

Պատմի՝ լսեք:

Աշխարհի բոլոր կողմերը ման եկած, տեսած հող ու ջուրը ոտի տակ տված, նախ ռուսի բանակում՝ ճապոնացու դեմ կռվեց, հետո գերմանական ֆրոնտում վիրավորվեց՝ տուն պիտի գար, չեկավ: Ոտի վիրավորն ի՛նչ է, երկու ամիս չանցած, լավացավ: Գնաց կռիվը շարունակի՝ տեսավ խառնակ է վիճակը: Հեչ գլխի ընկնելու բան չէր. ռուսի լեզուն ջրի պես գիտեր, ռուսի լեզուն՝ ջուր, ազատ կխմեր, բայց հեշտ չէր հասկանալ այդ խառնակությունը: Տասնյոթին էլ որ ցարը ընկավ՝ թեկուզ հին զինվոր, փորձված կռվող, բայց էլի գլխի ընկնելու բան չէր: Ու դարձավ Կարմիր: Եվ պիտի կռիվը էլի շարունակեր, որ հիմնովին գլխի ընկներ: Հետո Միջին Ասիայի ավազուտներում բասմաչների դեմ կռվեց: Էնպես կռվեց, որ գլխի չընկնելը դարձավ հասկանալի: Հետո՝ էդքան տեսած-քաշածը մի հրացան, մի փոշոտ շինել էր, հանձնեց, եկավ տուն: Եկավ՝ քառասուն տարեկան: Գնաց՝ քսան, եկավ՝ քառասուն: Եկավ՝ գյուղը տեղում չէր, գյուղը քոչել էր: Գյուղը առաջ վերեւում էր, հիմա ներքեւ էր իջել: Գյուղը անտառի մեջն էր՝ իջել էր Հարթը: Քառասուն էր տարիքը՝ կճանաչե՞ն: Թայ-թուշը ճանաչեցին:

«Էս մեր գյո՞ւղն է»:

Դեռ չշինված գյուղ էր, բայց ծուխ շատ կար: Բառաչ էլ կար, մայուն էլ, հաչոց էլ: Անասուն որ եղավ, շունը պետք է: «Մեր գյուղը՝ թուրքը թողե՞ց, որ գյուղ մնա: Մեր գյուղը վերեւում է, ավերակված, անիծված»: Տերտերն ասել էր՝ հին գյուղատեղը մեզ նոր խաթա էլ կբերի, իջել են: Հին գյուղը Չընգըլում էր:

Չընգըլից ներքեւ գյուղ կա՝ Հացձորը, մնացել է: Էս մի ներքեւը՝ Գյունեն, մնացել է: Չընգըլի միջի գյուղը չի մնացել:

Թողել, փախել էին, որ թուրքը չգա, կոտորի: Մարդ-կնիկ, մա¬նուկ-եծ: Էդքան շատ ղսմաթ ունե՞ր թուրքը, բասմաչից էլ շա՞տ... Թյո՛ւ... Թքեց ու կացնի կոթը սեղմեց մատներում՝ ամո՛թ:

Հինգ, տասը, տասնհինգ կիլոմետր՝ Ղլիջ գյուղի գյուղատեղն է հին: «Թըխկ-թախկ»,- արձագանքը Չընգըլի ծմակներում բարձր հնչեց: Ծառերը իրար փոխանցեցին կացնի արձագանքը, մեծերը՝ մեծ, փոքրերը՝ փոքր: «Թըխկ-թախկ»,- ավերակները ուրախ ձայնակցեցին:

Որպեսզի նոր տունը հիմնովին կառուցվեր, տանտիրուհի պիտի ունենար: Չկար: Իջավ ձորի գյուղերը՝ աղջիկ ուզելու:

2.

Աշխարհի բոլոր կողմերը ման եկած, տեսած հողն ու ջուրը ոտի տակ տված՝ աղջիկ ուզելը հեշտ բան չէր:

«Պսակվել կուզեմ»:

« Ջանըմ, աղջիկ ուզելը խաղուպա՞ր է, ինչքան էլ ասես՝ ազապ եմ»: Մեկ-մեկ մտավ տները. «Մարդու տալու աղջիկ չունե՞ք»: Ով կարծեց՝ հանաք է անում, ինքն էլ հանաք արեց: Հանաք անողի ծիծաղը երեսին մնաց՝ մեկական չափալախ էր թունդ՝ ազդու, սաստող, տեղին: «Աղջիկ ուզելը հանաք չէ»: Մեկ ուրիշն ասաց՝ որտեղա՞ցի ես, մարդ: Ասաց՝ Ղլիջից: «Ղլիջը Մեքքայո՞ւմ է, Երուսաղեմո՞ւմ է, մարդ, ղլիջցի բոլորին գիտեմ, դու ո՞վ եա»: «Ղլիջցի»: «Լավ, ղլիջցի ումոնցի՞ց ես»: «Տեփնանց ցեղից: Մելիքը գիտե՞ս, Դանիե՛լը, Ծա՛տուրը, Մո՛սին»:

Փա՜հ, հացձորցին ղլիջցու մշտական ախպերացուն է, բայց ղլիջցու կողքն էլ էդքան հա՞ստ: Ղլիջցին գյուղը թողեց, իջավ Հարթը: «Ո՞վ ես, մարդ, ճիշտն ասա»: «Ղլիջցի... Դե քսան տարի Ղլիջից կտրված... Եկա՝ գյուղը քոչել էր: Ասում են թուրքը..»: «Բարբարոսի տունը աստված քանդի... Աղջիկն ո՞ւմ համար ես ուզում»: «Ինձ համար: Հին Ղլիջում տուն եմ սարքում, տանտիրուհի չկա»:

«Բա խի՞,- հացրին,- մինչեւ էսօր ազապ ես, ցավ ունե՞ս մեջդ»:

«Սալդաթ էի, մի ֆրոնտը պրծավ՝ մյուսն սկսվեց: Հետո, մյուսը, ու քսան տարի, էլի»: «Ընդուր ես էդքան դսմաթով, տղամարդ չմնաց որ... Ի՞նչ կուզես»,-նորից հարցրին:

«Առնելու աղջիկ՝ սրբի, լվանա, թխի, եփի, կարկատի: Կին: Ազապ աղջիկ:

Երեխով, ամեն ինչով: Մեր գյուղը պիտի գյուղ մնա, թեկուզ միայն մեզնով.. Մեր գյուղը պիտի ապրի»:

«Հերը՞դ...»:

«Մեռել է»:

«Մե՞րդ...»:

«Չկա»:

«Ախպեր, քո՞ւրը...»:

«Հարթում են... Ողջ գյուղի հետ: Բայց Չընգըլի գյուղը պիտի ապրի: Հա՛, պիտի»...

3.

Չընգըլը՝ բա՜րձր-բա՜րձր, բայց արեւը Քյաթուկա սարից է ելնում: Քյաթուկա սարը՝ սիրուն-սիրուն, գարնանը ծխամորճ է ծխում գոլորշի-գոլորշի, ամառը՝ սեւ-կապույտ,

աշնանը՝ չես կարող որոշել իսկական գույնը: Ձմեռը որ գալիս է՝ պառավի մազ, բայց գլուխը՝ բարձր:

Չընգըլի դիքում կանգնես, Քյաթուկա սարի խոնավ գոլորշին առանց ներքեւի ձորերը մտնելու լուռ գա, մտնի մեջդ, խտղտացնի աչքերդ. հոգիդ չգիտես մարմնիդ որ մասից՝ իջնի¬բարձրանա, հասնի աչքերիդ, ջուր դառնա, կախվի թարթիչներիցդ՝ հոգիդ թռա¯վ-գնա¯ց...

-Ո¯ւր...

Մի արծիվ (արծիվ, թե՞ անգղ) լազուրում չափի անսահմանությունը թեւերի հպարտ բացվածքով: Անսահմանությունը անգղի (անգղի, թե» արծվի) թռիչքում նոր ձեւ ստանա՝ կլոր: Վերացած հայացքդ հատի լազուրի տիրակալի գծած կլոր ան-սահմանությունը՝ վերից-վար, կողից-կող, եզրաեզր՝ է¯հ, հոգի մնա՞ց մեջդ...

Մի բուռ ցորեն է մարդուս կյանքը՝ հատիկ-հատիկ, ամեն մի հատիկը՝ մի օր: Մի ամիս: Մի տարի... Մարդս բռաչափ հուշեր է ցանում բռաչափ կյանքում, քանի՛սն են նրա բերքին նայում: Քանի՛սն են հետո հիշում նրա բռաչափ կյանքը: Թե հիշում էլ են՝ շա¯տ քիչ: Ո՛վ է այս քչի համար հոգոց քաշողը, ո՛վ...

Սրանք՝ մեր սեւ-կապույտ-մշուշագույն սարերը, խոնավ, համր սարերը՝ եղել են, կմնան: Սրանք մի բուռ ցորեն չեն, ցորենի բռաչափ կենտ-հատիկ են՝ պինդ, ամուր: Այս բռաչափ կենտ հատիկն էլ որ հոգնեցնի հոգատար բուռը... Ո՛վ է այս չեղյալ ցավին դարման անողը:

Ուրիշ էլ ով, եթե ոչ՝ ժամանակը, որ նման է մեր երկնքի գույնին ու մեր երկնքի նման անհասանելի է ու շոշափելի, հեռու եւ մոտ:

Մեր սարերը՝ սեւ-կապույտ-մշուշագույն, ու նրանց վրա մշտնջենական խոնավ թախիծ կա մշուշի տեսքով՝ հա¯մր-հա¯մր... Այստեղ լեգենդներ են հյուսվել, առասպելներ են չափազանցվել, երազներ են խառնվել մեր սարերի խոնավ զեփյուռին ու զեփյուռի նման հալվել: Հիշող կա՞…

Մեր գյուղը՝ ծեր այա, փեշեր ուներ շուրջը փռած, գլխում՝ հին ու նոր հուշեր, աչքը՝ երկնագույն ժամանակին, ո՛ւր է...

4.

Աշխարհի բոլոր կողմերը ման եկած, տեսած հողն ու ջուրը ոտի տակ տված՝ պիտի ապրեր գյուղի փոխարեն: Գյուղի տեղը հո՞ կա: Գյուղի շուրջը անտառները հո՞ կան: Հարթի գյուղը որ միավորվեց հարևան գյուղերի հետ՝ անտառ ու ձոր միավորյալ էին, տվին թե՝ պահիր: Ասաց՝ «Հին գյուղի հետ անտառն էլ կպահեմ»:

Ծուխը ելնում էր, Չընգըլի քամին՝ ընկեր, ծուխը ուղիղ էր բարձրացնում, որ հեռվից տեսանելի լինի, որ իմացվի՝ գյուղ է:

Տավարը մեկ էր, երկու, երեք: Դառավ մի փոքրիկ նախիր:

Ոչխարը՝ ինչքա՞ն էր՝ դարձավ հոտ:

Խոզը դարձավ բոլուկ:

Շունը՝ շնանոց:

Բայց երեխա չեղավ: Կինը չբեր էր: Սպասեցին... Չհաշտվեցին ճակատագրի հետ, բայց սպասեցին: Ծուխը պիտի շարունակվի:

Տավարը պառավում էր, սատկում: Ոչխարը, խոզը, շունը՝ սատկում:

Ոչ մեկը չէր ծախում, թող շատ երեւան, թող գյուղի նման լինի:

Նոր Ղլիջից խռովեց, նոր ղլիջցիներից խռովեց: Ամենքից խռովեց:

Համարյա մոռացան իրենց: Անտառապահին հիշողն ո՛վ է. քուր¬ախպերը եթե խռովեն... Քուր-ախպերից խի՞ խռովեց. կարող էին չէ՞, գալ-գնալ: Չեկան-չգնացին: Անիծված է... Ո՞վ է անիծել, բա հարյուր տարվա գերեզմանոցից կխռովե՞ն. հեր ունեք թաղած, մեր, պապ, տատ, հարազատներ: Էն աշխարհում էլ պիտի՞ հորից-մորից հեռու ապրեք...

Իր բաժին Աստծուց էլ խռովեց: Աստված իր տվածն է առնում, իրեն ի՛նչ է տվել, որ առնի: Առանց Աստծո ի՛նչ տուն, ի՛նչ օջախ: Ի՛նչ գյուղ: Որ զավակ չեղավ, գյուղը ո՞նց պիտի ապրի: Ինչքա՞ն: Ասենք՝ ապրեցին իննսուն, հարյուր, հարյուր տասը տարի, հետո՞: Վե՞րջը:

Պիտի իրենք երկար ապրեն, որ գյուղը երկար մնա, ամենքի լա՛չու...

5.

«Կնիկ, թե շուտ մեռանք՝ մեզ ամոթ, պիտի ապրենք հարյուր... շատ..»: «Է՛հ, Աստծո միննաթը որ չունենք «: «Հարյուր պիտի ապրես: Ես քսան տարով մեծ եմ, հարյուր քսան պիտի ապրեմ»: «Մեզ ո՞վ կթաղի»: «Թաղող կգտնվի, դու հարյուր պիտի ապրես, կնիկ, ես՝ հարյուր քսան...»: «Էս ջանով պիտի՞ հարյուր ապրեմ»:

Կա՛պրի: Չընգըլի օդը՝ մաքուր, ջուրը՝ զուլալ, ապրողը կապրի: Պիտի: Բայց որ սիրտդ դարդը կալած է՝ կապրե՞ս: Կին է, դարդը զավակ է՝ չունեցավ: Դարդը մարմնում կապրի, հետո ցավ կդառնա: Ցավը չանգեր ունի՝ որտեղդ բռնեց՝ բաց չի թողնի: Կբռնի: Մեջքը հենա բռնել է՝ կուչ կածի, կկռացնի, կգցի տեղաշորը:

«Աստծու աշխարհին երեւի պետքական չեմ, պետքական լինեի՝ զավակ կծնվեր»:

Ապրելը դժվա՞ր է: Ապրելը դժվար չէ, պիտի պետքական լինես, որ ապրես: Ո՛ւմ է ինքը պետք. գոնե մի կենտ զավակ չունեցավ: Ունենար՝ կապրեր: Ինչքան ասես՝ զավակի հետ կապրեր: Անզավակ կապրի՞: Չի՛ ապրի:

«Կնիկ, անզավակ էլ ապրիր: Որ մեռնենք՝ գյուղն էլ կմեռնի»:

6.

Մի առավոտ ելավ՝ չէ: Մեռնելու ցավն էր, բռնել էր: Դարդն էր, ցավ էր դառել: «Չտխրես, մարդ, գնում եմ: Անզավակ եմ գնում»: Վաթսուն էր՝ մնացած տարիներն ո՛ւր են: Մնացած տարիները մեծ թիվ են, հաշվել հնարավոր չէ: «Չտխրես, մարդ, դու ապրիր, որ գյուղն ապրի:

Մեռնելը հաստատ էր: «Ես թաղող ունեցա, մարդ, քեզ ո՛վ կթաղի»:

«Գյուղը պիտի ապրի: Չէ, բայց ո՞նց ապրի՝ գյուղը իրենք են՝ մարդ-կնիկ... Տավարը, ոչխարը, խոզը, շունը, հավ-ճիվ՝ գյո՞ւղ են: Գյուղը՝ մարդն է, Աստծու ստեղծածը: Քառասուն տարի գյուղն իր ապրելիքն ապրել է: Քառասուն տարի գյուղը մարդ-կնիկ էր՝ տավարով, ոչխարով, խոզերով, շուն ու հավ-ճիվով: Ուրեմն ապրած ութսուն տարիներն իզուր էին: Ապրած ութսուն տարին քոռ կոպեկ չարժեր:

«Մարդ, քեզ թաղող...»: Օրենք է, պիտի կեսօրին մեռներ: Օրենք է, պիտի մյուս կեսօրին թաղվեր:

Բակում երկու փոս փորեց, ողորմածիկին ամփոփեց մեկում:

«Գնացիր, կնիկ, իրիկունը կգամ: Գնամ, ասեմ, որ էլ անտառը պահող չկա, թող նոր պահակ դնեն: Համ էլ ապրանքը բաց թողնեմ, գոմում չմնան՝ սոված սատկեն: Իրիկունը կգամ, ինձ սպասիր»...

7.

Ասյքա՛նը: Հետո կպատմի, որ իրիկունը գոմի դուռը կոտրած էր, փարախի դուռը կոտրած էր, խոզանոցի դուտը կոտրած էր: Կապած շուն չկար: Տան դուռը միայն գոցված էր՝ եկող մարդ լինի՝ մնալու տեղ ունենա: Իրիկունը բաց շիրմափոսում մեռնող մարմինը աստիճանաբար մեռցնում էր ապրած 29200 օրերի ստվերները: Իսկ հոգին... Հոգին դուրս էր եկել, ճախրում էր սեւ-կապույտ-մշուշագույն լեռների վրա, եւ եթե մեկը տեսնում էր, տեսածը արծիվ էր (թե՞ անգղ): Արծիվը (անգղը) լարված թեւերով շրջագծում էր լազուրն ու աղեկտուր կոնչում, վախենալով իջնել ներքեւ, դեպի մեռնող մարմինը, որից մարդաբոյ բարձր, նեղ փոսի շուրջը շները լուռ մարդացել էին:

Գիշերը, եթե մեկը տեսնում էր, տեսածը բու էր, որ նույն լացն էր ողբում՝ առանց հանգրվան փնտրելու:

Տեսնող աչքը եթե այսքանը տեսներ՝ կապրեր նաև ամբողջ պատմածը՝ բառ առ բառ, հնչյուն առ հնչյուն։ Լսե՞ց...